



Նոր

ՃՐԱԳ



Թ.Տարի : Թիւ 3 *Եռամսեայ թերթիկ*
Յուլիս 2023

9

Հրատարակութեամբ

Հ.Մ.Ը.Մ. Այնեղօ Մեկուսի շրջանի վարչութիւն



Հ.Ս.Բ.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միութիւն

Միութիւն

Պատմական

Լրատու

Սկարտական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹԻԻ 428 «ՄԱՐԶԻԿ»Ի

ԼԱՅՆԱԽՈՒՅՈՒՄԻ



Լայնախոհութիւնը կամ լայնամտութիւնը քիչերուն տրուած արժանիք մըն է: Հասունութեան չափանիշ է: Լայնախոհ ըլլալ կը նշանակէ հարց մը իր բոլոր երեսներով քննել եւ ըստ այնմ արդար եւ ճիշդ եզրակացութեան յանգիլ:

Լայնախոհութեան հակառակը նեղմտութիւնն է, որ յատուկ է տգէտ եւ մոլեռանդ մարդոց: Նեղմիտ մարդը չափ ու սահման չունի իր զգացումներուն մէջ: Չի կրնար կիրքերը գսպել: Արժէք չ'ընծայեր իր նմաններու իրաւունքներուն եւ ազատութեան սահմաններուն: Լայնախոհութիւնը մաս կը կազմէ, պէ՞տք է կազմէ, կրթական-միութենական մեր արժէքներուն եւ քաղաքակրթական արժանիքներուն:

Լայնախոհ ըլլալու համար պէտք է նկարագիր, սկզբունք եւ կեցուածք ունենալ. ճիշդին ճիշդ ըսել, սխալին^a սխալ: Կեղծաւորութիւն, շահակցութիւն եւ քծնանք կ'անտեսեն տարրական այս պահանջը:

Հարց մը, դէպք մը իր բոլոր երեսներով քննելէ ետք, լայնախոհը կը յանգի որոշ եզրակացութեան, որ կրնայ նպաստաւոր չըլլալ կարգ մը մարդոց: Ընդհանուրին շահը, պարկեշտութիւնը եւ անշահախնդրութիւնը, սակայն, կը պահանջեն, որ հանուելիք եզրակացութիւնը եւ տրուելիք վճիռը ըլլան օրինաւոր եւ ուղիղ:

Լայնախոհութեան հիմը ճշմարտախօսութիւնն է, որ բնորոշ է նկարագիր ունեցող անձերու: Ազնիւ ու պարկեշտ մէկը թոյլ չի տար ինքզինքին ստել եւ վնասակար բաներ ընել: Վնասակար եւ անպարկեշտ կեցուածք է լռել, երբ այդ լռութիւնը ճշմարտութիւն մը կը ծածկէ կամ իրականութիւն մը կը խեղաթիւրէ:

Ճշմարտախօսութիւնը ամէն մարդու տրուած յատկութիւն մը չէ: Վախկոտները, անպարկեշտները եւ նկարագիրէ զուրկ մարդիկ սովորաբար զրկուած կ'ըլլան ճշմարտախօսութեան յատկութենէն:

Լայնախոհ մարդուն քաղաքականութիւնը ազատամտութիւնն է: Ազատամիտ անձեր ընդհանրապէս չեն սիրուիր անպարկեշտ մարդոց կողմէ: Չանգուածը, ժողովուրդը կը սիրէ լայնախոհ եւ ազատամիտ մարդիկը: Ծահերով ու նպատակներով առաջնորդուող անձեր, ընդհակառակն, կ'ատեն լայնախոհները: Մինչեւ իսկ մրցակիցներ եւ թշնամիներ կը նկատեն զանոնք:

Լայնախոհութիւնը կրնայ առաջքը առնել անհասկացողութիւններու: Եթէ մարդիկ լայնախոհ ըլլան, իրարու մտիկ ընել գիտնան, հասկնան, իրարու գաղափարներու հանդէպ հանդուրժող ըլլան, շատ մը անհամաձայնութիւններ, հակառակութիւններ եւ թշնամութիւններ կը չքանան:

Լայնախոհութիւնը տարբերութիւններու հանդէպ յարգանքն է, արդարութեան եւ ճշմարտութեան սկզբունքներու վրայ հիմնուած:

Պատմութիւնը ցոյց տուած է, որ լայնախոհ մարդիկ ընդհանրապէս եղած են ժողովրդային իրաւունքներու պաշտպաններ, թէւ օրին քննադատուած, մերժուած եւ հալածուած են իշխանութիւններու կողմէ:



Հոն ուր մարդիկ անձնական հաշիւներով կը շարժին, հոն հանրային գործը կը տուժէ: Ես-ի գերիշխանութեան^ա մենք-ը կը նահանջէ:



Լայնախոհ մարդը կ'անտեսէ իր անձնական շահերը, կը խօսի ճշմարտութիւնը եւ կը պաշտպանէ արդարութիւնը: Ներկան էթէ չի գնահատեր իր կեցուածքը, ապագան եւ պատմութիւնը անպայման արժանին կը հատուցեն անոր: Լռութիւնը ոսկի է, ըսուած է իրաւամբ: Լայնախոհը շատ լաւ գիտէ ոսկիին արժէքը: Տագնապներու պահերուն ան գիտէ լռել, զուսպ մնալ եւ տոկալու իմաստութիւն ցուցաբերել, մանաւանդ երբ ամբոխները խելագարած են եւ ամէն տրամաբանութիւն, չափ ու կշիռ կորսնցուցած են:

Ճկունութիւնը այս պարագային լայնախոհ մարդուն գլխաւոր յատկութիւններէն մէկն է: Ճկունութիւնը ջղային եւ դիւրաբորբոք անձերը զինաթափող զէնք մըն է: Խոհեմ եւ ճկուն մտքի տէր մարդը հեռուն տեսնելով ու մտածելով լուռ կը մնայ, որովհետեւ ան լաւ կը գիտակցի, որ անտեղի խօսուած ճշմարտութիւնները երբեմն սխալ կը հասկցուին եւ իրենց նպատակին չեն ծառայեր:

Արագօրէն տրուած ամէն վճիռ կ'ունենայ անբաղձալի հետեւանքներ: Լայնախոհը հանդարտօրէն կը քննէ հարցերը եւ ապա կու տայ իր որոշումը, նկատի ունենալով անոր հետեւանքները, մինչդեռ անհանդարտ եւ բարկացոտ խառնուածքով մարդիկ սովորաբար անհամբեր կ'ըլլան եւ իրենց անմիտ որոշումներով վէճերու դուռ կը բանան: Անհատական եւ հաւաքական մեր կեանքին մէջ լայնախոհութիւնը յաջողութեան պայմաններէն մէկն է: Ժպիտով, յարգանքով եւ համբերութեամբ նպաստաւոր լուծում կրնան գտնել ամէնէն կնճռոտ հարցերը նոյնիսկ:

Պէտք է զարգացնել լայնախոհութեան մշակոյթը^ա իրաւունքի, արդարութեան, ճշմարտութեան եւ յարգանքի արժէքներու տարածումը, մնայուն վարուելակերպի եւ դաստիարակչական ծրագիրի վերածելով զայն, որպէսզի մարդը դիմացինին մէջ իր նմանը եւ հարազատը գտնէ, Որպէսզի ինքզինք եւ շրջապատը անաչառութեամբ դիտելու քաջութիւնը ունենայ, Որպէսզի մտածումներով, զգացումներով եւ ապրելակերպով աւելի ու աւելի մարդանա՞յ:





Հ.Ս.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

Հ.Ս.Ը.Մ.Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՍԿՍԱԲ ՆԻԿՈՍԻՈՅ ՄԷՋ




Կազմակերպությամբ Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության եւ հիւրընկալությամբ Կիպրոսի Հ.Ս.Ը.Մ.-ՀԵՄ-ի վարչության, Ուրբաթ, 28 Ապրիլի կէսօրին, Նիկոսիոյ մէջ իր աշխատանքներուն սկսաւ Հ.Ս.Ը.Մ.ի երիտասարդական երկրորդ համագումարը՝ քննելու համար միութեան սկստական եւ մարզական բնագաւառներէն դուրս գտնուող երիտասարդ Հ.Ս.Ը.Մ.ականներու (18-30 տարեկան) աշխատանքային նոր գործադաշտեր ստեղծելու կարելիութիւնները:



Համագումարը ընթացք առաւ բացման պաշտօնական հանդիսությամբ մը, որուն ներկայ գտնուեցան Կիպրոսի թեմի Կաթողիկոսական փոխանորդ Խորէն Արք. Տողրամանեան, Կիպրոսի հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան, գաղութի ազգային-կուսակցական եւ թեմական մարմիններու ներկայացուցիչներ, Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության անդամներ եւ երիտասարդական համագումարի 30 մասնակիցներ:



Բացման հանդիսութեան իօսքեր արտասանեցին Կիպրոսի Հ.Ս.Ը.Մ.-ՀԵՄ-ի վարչության ատենապետ Սարիատ Տէմիրճեան, Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության ատենապետ Վաչէ Նանարեան եւ Կաթողիկոսական փոխանորդ Խորէն Արք. Տողրամանեան: Անոնք գնահատեցին երիտասարդութեան դերը եւ շեշտեցին Հ.Ս.Ը.Մ.ի երիտասարդական ծրագիրներուն անհրաժեշտութիւնը մեր իրականութեան մէջ: Իր խօսքին մէջ, Հ.Ս.Ը.Մ.-ՀԵՄ-ի վարչության ատենապետը նկատել տուաւ, որ Հ.Ս.Ը.Մ.ական երիտասարդները այսօր պատնէշի վրայ կանգնած՝ իրենց ամբողջ կարողականութիւնը ի սպաս դրած են մեր ժողովուրդի ծառայութեան, խոստանալով որ հաւատքով եւ սիրով պիտի շարունակեն ընթանալ միութեան մեծ երախտաւորներու բացած ուղիէն:



Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության ատենապետ Վաչէ Նանարեան ընդգծեց, որ այսօր, աւելի քան երբեք, կենսական է մեր երիտասարդութեան ներուժը պահպանել եւ անեցնել, որոպէսզի նորահաս սերունդի մեր տղաքն ու աղջիկները դաստիարակուին իբրեւ տիպար քաղաքացիներ եւ միութեան ճամբով ծառայող ուժ դառնան այն բոլոր շրջաններուն մէջ, ուր կը գործեն անոնք: Հ.Ս.Ը.Մ. կ'առաջադրէ նաեւ պատրաստել վաղուան մեր պատասխանատուները եւ վարչականները, որոնք պիտի շարունակեն նախկիններուն գործը, յայտնեց Վաչէ Նանարեան:

Նանարեան նաեւ աւելցուց, որ երիտասարդները թարմութիւն կու տան համահայկական մեր աշխատանքներուն, նոր թափ եւ աշխուժութիւն՝ ազգային մեր կեանքին ու կառոյցներուն: Հետեւաբար, ան հրամայական նկատեց երիտասարդութեան դերն ու ներդրումը Հ.Ս.Ը.Մ.ին եւ անոր ճամբով ազգային մեր կեանքին մէջ:



Հ.Մ.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր



Կիպրոսի Կաթողիկոսական փոխանորդ Խորեն Արք. Տողրամանեան ողջունեց 105-ամեայ, սակայն միշտ երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ը, որ միշտ կը մնայ աշխոյժ, կենսունակ եւ ազգային մեր պահանջատիրութեան առաջին գիծերուն վրայ: Խորեն Արք. խորին յարգանքով խոնարհեցաւ Արցախեան պատերազմներուն զոհուած Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդներու յիշատակին դիմաց եւ շեշտեց, որ երիտասարդութիւնը եղած է ու կը մնայ յեղաշրջող, փոփոխութիւն կատարող տարր: Ան կոչ ուղղեց համագումարի մասնակիցներուն անսալու Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբան «Բարձրացիր-բարձրացուր»ին եւ տեւաբար ինքզինք կերտելու, կատարելագործելու եւ բարձրանալու, կարենալ բարձրացնելու համար զգալի նահանջի մատնուած մեր կեանքը Հայաստանի եւ Մփիւքքի մէջ: Երիտասարդութիւնը մեր յոյսն ու ապաւենն է, մեր ներկան ու ապագան է, եզրափակեց Խորեն Արք. Տողրամանեան:



Բացման պաշտօնական հանդիսութիւնը ընդգրկեց գեղարուեստական պատշաճ յայտագիր. նուագ (տուտուկով՝ հայրենի երաժիշտ Արսէն Մկրտչեան), երգ (Մարիա Մոսկոֆեան) եւ Հ.Մ.Ը.Մ.ի 105-ամեայ երթը ծանօթացնող տեսերիզի ցուցադրութիւն:



Բացման պաշտօնական հանդիսութեան յաջորդեց հիւրասիրութիւն: Ապա, համագումարը անցաւ իր առաջին օրուան օրակարգին, ուր Հ.Մ.Ը.Մ.ը եւ երիտասարդութիւնը յուզող այժմէական նիւթերով հանդէս եկան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Վաչէ Նանարեան, Կիպրոսի թեմի Կաթողիկոսական փոխանորդ Խորեն Արք.Տողրամանեան եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի վարչութեան ատենադպիր Յակոբ Գազանճեան: Բոլոր նիւթերուն յաջորդեցին զրոյց-քննարկումներ եւ տեսակէտներու փոխանակումներ:

Երեկոյեան, սեմինարին առաջին օրուան աւարտէն ետք, մասնակիցները այցելեցին Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի ակումբ, ապա հիւրընկալուեցան Կիպրոսի հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի կողմէ:





Հ.Ս.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Մոսկովն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր



Հ.Ս.Ը.Մ.Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՉ

28-29 Ապրիլ 2023-ին, Կիպրոսի մէջ տեղի ունեցաւ Հ.Ս.Ը.Մ.ի երիտասարդական երկրորդ համագումարը, կազմակերպութեամբ Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան: Առաջին համագումարը կատարուած էր չորս տարի առաջ, 10-11 Մայիս 2019-ին, Աթէնք, Յունաստան:

Երիտասարդական համագումարները նորութիւն են Հ.Ս.Ը.Մ.ի համար: Անոնք կը քննեն միութեան սկաուտական եւ մարզական բնագաւառներէն դուրս գտնուող երիտասարդ Հ.Ս.Ը.Մ.ականներու (18-30 տարեկան) աշխատանքային նոր գործադաշտեր ստեղծելու կարելիութիւնները:

Բ. համագումարը ունեցաւ բացման պաշտօնական հանդիսութիւն, Ուրբաթ, 28 Ապրիլ 2023-ի առաւօտեան ժամը 10-ին: Այնուհետեւ համագումարին աշխատանքները ընթացք առաւ զրոյց-քննարկումներով, որոնց նիւթերը կը ներկայացնէին եւ զրոյցները կը վարէին Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան, Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Խորէն Արք. Տողրամաճեան եւ Հ.Ս.Ը.Մ.-ՀԵՄ-ի վարչութեան ատենադպիր եղբ. Յակոբ Գազանճեան:

Համագումարին երկրորդ օրը քննարկումները շարունակուեցան յատուկ աշխատանիստերով, որոնք կը վարէին Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր եղբ. Վիգէն Աւագեան եւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Օշին Փիրումեան:

Համագումարին աշխատանքներուն առընթեր, մասնակիցները առիթը ունեցան այցելելու Հ.Ս.Ը.Մ.-ՀԵՄ-ի ակումբ, հայ համայնքի ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի, Մեծ Եղեռնի նահատակաց յուշակոթող եւ Ազգային Առաջնորդարան:

Երեկոները կը կազմակերպուեցան երիտասարդական հաւաքոյթներ, իսկ Շաբաթ, 29 Ապրիլի երեկոյեան, համագումարին մասնակիցները ներկայ գտնուեցան ի պատիւ իրենց Հ.Ս.Ը.Մ.-ՀԵՄ-ի կազմակերպած ճաշկերոյթին:

Ծանօթ: Օրուայ համագումարին միութիւնս , իր մասնակցութիւնը բերաւ Եղբ. Ռազմիկ Արամեան-ի ներկայացուցիչով :



Եղբ. Ռազմիկ Արամեան



Հ.Մ.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տոն / Լրատու / Այսօր

Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ԱՄԲՐՏԵՑ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ



Երկու օրուան վրայ երկարած նիստերէ ետք, Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդական Բ. համագումարը իր աշխատանքները յաջողութեամբ աւարտեց Նիկոսիոյ մէջ, Կիպրոս: Պաշտօնական բացման հանդիսութենէն ետք, Ուրբաթ, 28 Ապրիլի կէսօրին, համագումարը անցաւ իր առաջին օրուան աշխատանքներուն եւ տեսանիւթով լսեց վկայութիւնները երիտասարդական Ա. համագումարին (Աթէնք, Մայիս 2019) խումբ մը մասնակիցներու: Այս, կազմեց իր դիւանը եւ աշխատանքային յանձնախումբերը:



Այնուհետեւ, համագումարը լսեց երեք նիւթեր եւ կատարեց համապատասխան քննարկումներ.-

«Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը երէկ եւ այսօր»- Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Վաչէ Նանարեան:

«Հայ երիտասարդութիւնը իր տագնապներով եւ սպասումներով»- Կիպրոսի թեմի Կաթողիկոսական փոխանորդ Խորէն Արք. Տողրամանեան:

«Հ.Մ.Ը.Մ.ի կառուցային, կազմակերպական, դաստիարակչական, քարոզչական մօտեցումները որքանո՞վ կը պատշաճին մերօրեայ երիտասարդութեան ակնկալութեան»- Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի վարչութեան ատենադպիր Յակոբ Գազանճեան:

Երիտասարդական համագումարին երկրորդ օրը յատկացուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդական ծրագիրներու ներկայացման, արժեւորման ու քննարկման: Կատարուեցան աշխատանիստեր եւ ընդհանուր նիստեր: Նիւթերը ներկայացուցին.-

«Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդական գործունէութեան շրջագիծը. քննարկում երիտասարդական ուղեգիծի»- Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Օշին Փիրումեան:

«Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդական ուղեգիծը եւ նոր գործադաշտերու կարելիութիւնները»- Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր Վիգէն Աւագեան:

Յայտնենք, որ համագումարին երկրորդ օրը, մասնակիցներուն այցելեց եւ Կիպրոսի ու կիպրոսի հայութեան մասին պատմական ու այժմէական տեղեկութիւններ փոխանցեց Կիպրոսի հայ համայնքի ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան:

Աւարտին, համագումարին մասնակիցները ընտրեցին իրենց ներկայացուցիչները, որոնք երիտասարդութեան առաջարկները, ակնկալութիւնները եւ սպասումները պիտի փոխանցեն Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական ԺԳ. Ընդհանուր Ժողովին, որ տեղի պիտի ունենայ Հոկտեմբեր 2023-ին, Հայաստան: Համագումարին ներկայացուցիչները Ընդհանուր Ժողովին պիտի մասնակցին խորհրդակցական ձայնով:



Հ.Ս.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Մոսկվա

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

ԿԻՊՐՈՍԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԴԱՄՔԱՐԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Շաբաթ, երեկոյան ժամը 6-ին, համագումարի աշխատանքներու ավարտէն ետք, Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ Հ.Ս.Ը.Մ.-ՀԵՄ-ի վարչական անդամներու գլխաւորութեամբ, մասնակիցները այցելեցին Թիմփօ, Կիպրոսի նահատակաց յուշակոթող, ուր յարգանքի իրենց տուրքը մատուցեցին 1974-ին, Թուրքիոյ Կիպրոս ներխուժման օրերուն նահատակուած Յունաստանի եւ Կիպրոսի յոյն զինուորներու յիշատակին: Տեղի ունեցաւ դափնեպսակի զետեղում եւ յունարէն խօսքի արտասանութիւն:



ՎԱՐԴԳԷՍ ՄԱՀՏԵՍԵԱՆԻ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ

Նոյն օրը, երեկոյան, ի պատիւ համագումարի մասնակիցներուն կազմակերպուած Հ.Ս.Ը.Մ.-ՀԵՄ-ի ճաշկերոյթին, Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը անակնկալ մը հրամցուց ներկաներուն, երբ միութեան «Արտակարգ» շքանշանով պագեւատրեց Կիպրոսի պետական համայնքի ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանը՝ Հ.Ս.Ը.Մ.ի աշխատանքներուն իր մնայուն եւ սերտ աջակցութեան համար:





Հ.Մ.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միութիւն

Միութիւն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԵՒ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅՈՒՇԱՐՁԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Կիրակի, 30 Ապրիլի կէսօրին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող քառանդամ պատուիրակութիւն մը, բաղկացած ատենապետ Վաչէ Նանարեանէ, անդամներ Վիգէն Աւագեանէ, Թային Օրտողեանէ եւ Օշին Փիրումեանէ, այցելեց Ազգային Առաջնորդարան եւ հանգիստում մը ունեցաւ թեմի Կաթողիկոսական փոխանորդ Խորէն Արք.Տողրամաճեանի հետ: Տեղի ունեցաւ երախտիքի եւ գնահատանքի յուշանուէրի յանձնում: Ապա, Կեդրոնական Վարչութեան անդամները, Հ.Մ.Ը.Մ.- ՀԵՄ-ի վարչութիւնը եւ համագումարին մասնակիցները այցելեցին Հայոց Տեղասպանութեան նահատակաց յուշարձան, ուր Հ.Մ.Ը.Մ.ի անունով զետեղեցին ծաղկեպսակ մը: Համագումարի մասնակիցներուն կողմէ արտասանուեցաւ ոգեկոչական խօսք:





Մրույթներ Պատմական Լրատու Ակադեմիական Մարզական **ՄԱՐՁԻԿ**


Տուն / Լրատու / Այսօր

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ
ՄԱՐՁԻԿ 42-րդ տարի, Թիւ 428



Խմբագրական- Լայնախոհություն
6 Փետրուարի երկրաշարժին առիթով Հ.Մ.Ը.Մ.ի շրջաններուն կողմէ Սուրիոյ
Շրջանային Վարչութեան յղուած գորակցական
գիրեր

Հակառակ շրջափակման դժուարին պայմաններուն՝
Արցախի Մեկուսի շրջանը կը շարունակէ
միութենական իր աշխոյժ գործունէութիւնը
Համա-արարական սկաուտական առաջին ճամբարի
մասնակցութիւն- Յարութ Չէրինեան
Վկայութիւններ Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի փառաւոր
անցեալէն (Բ.)- Ճորճիկ Ռաստկելէնեան
Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտը ներկայ է ամենուրեք-
Րաֆֆի Կէօփոլլանեան
Յառաջ, մի՛շտ յառաջ, թէկուզ խելագարած...- Սերոբ
Սահակեան
Թենիսը պէտք է սիրել, թենիսը պէտք է զգալ ու
ապրիլ,- «Մարզիկ»ին կ'ըսէ Սուրիոյ 20 տարուան
ախոյեան Դաւիթ Դաւիթեան
Զօն Հ.Մ.Ը.Մ.ին- Տորթ. Ղազար Պօղոսեան
Կանխելու համար ընկերային ցանցերու բարոյական
եւ ազգային վնասները- Վ. Աւագեան
Թիւր կ'ընդգրկէ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքի
անդրադարձներ (Հայաստան, Թիֆլիս, Լիբանան, Սուրիա, Երուսաղէմ, Աւստրալիա,
Մ. Նահանգներ, Շուէտ, Հոլանտա, Միւնիխ, Գանատա): 48 էջ:



#PHJ2023

Միացի՛ր

21-30 Յուլիս 2023


Հ.Մ.Ը.Մ.Ի ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՔԱՏՐԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԱՌՑԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԸ ԸՆԹԱՑՔ ԱՌԻՆ



Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին կազմակերպութամբ, Ծաբաթ, 10 Յունիսին ընթացք առին միութեան քարոզչական քատրերու պատրաստութեան առցանց դասընթացքները, մասնակցութեամբ Շրջանային եւ Մեկուսի շրջաններէ 60 մասնակիցներու:

Դասընթացքին բացումը կատարեց եւ նպատակը ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր եւ քարոզչական աշխատանքներու պատասխանատու եղբ. Վիգէն Աւագեան: Ան ըսաւ, որ քարոզչութիւնը լայն տեղ եւ դեր ունի մեր կեանքին մէջ: Քարոզչութիւնը կարելոր է միութենական աշխատանքները ճիշդ ձեւով ճիշդ թիրախին հասցնելու համար: Այդ նպատակին համար, Կեդրոնական Վարչութիւնը անցնող քառամեակին, առաջին անգամ ըլլալով, յառաջացուց քարոզչական յանձնախումբ մը, որ մշակեց եւ գործադրեց զանազան ծրագիրներ: Այսօր, յանձնախումբը կը ձեռնարկէ այս դասընթացքին պատրաստելու համար քարոզչական աշխատանքներու երիտասարդ ու մասնագէտ քատրեր:

Ծարուակելով, եղբ. Աւագեան յայտնեց, որ դասընթացքը պիտի ըլլայ խտացեալ, պիտի երկարի չորս շաբթուան վրայ եւ դասընթացքի աւարտին մասնակիցները պիտի արժանանան յատուկ հաստատագիրներու:



Այնուհետեւ, եղբայրը հրաւիրեց օրուան զեկուցաբեր, Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբի անդամ եղբ. Նժդէհ Մկրտիչեանը, որպէսզի ներկայացնէ իր նիւթը՝ «Լուսանկար եւ տեսանիւթ նկարելու ձեւերը եւ զանոնք յաւազոյն միջոցներով օգտագործելու կարելիութիւնները»:

Եղբ. Մկրտիչեան իր նիւթը ներկայացուց փառլոր փոյնթով: Ան նախ ծանօթացուց լուսանկարչութեան գլխաւոր սկզբունքները, տեսակները, յաջող նկար մը ունենալու թեքնիք պահանջները, ապա օրինակներով բացատրեց, թէ ինչպէս Հ.Մ.Ը.Մ.Ի քարոզչութեան ծառայող նկարներ եւ տեսանիւթեր կարելի է ունենալ: Եղբոր 30 վայրկեան տեւողութեամբ հետաքրքրական ներկայացումին յաջորդեց հարցում-պատասխանի բաժին մը, որ երկարեցաւ մէկ ժամուան վրայ:


Յայտնենք, որ դասընթացքին մնացեալ նիւթերը պիտի ներկայացուին յառաջիկայ երեք Ծաբաթ օրերուն՝ 17, 24 Յունիս եւ 1 Յուլիս 2023-ին: Նիւթերը պիտի ընդգրկեն հետեւեալները.-

Հ.Մ.Ը.Մ.Ի ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՔԱՏՐԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԵՄԻՆԱՐԸ ԱԲԱՐՏԵՑԱԲ



Ամսուան մը վրայ երկարած առցանց չորս հանդիպումներէ ետք, Շաբաթ, 1 Յուլիսին աւարտեցաւ միութեան քարոզչական քատրերու պատրաստութեան նպատակով Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին կազմակերպած սեմինարը, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի աշխարհասփիռ կառոյցի աւելի քան 50 ներկայացուցիչներու:

Սեմինարին չորրորդ եւ վերջին հանդիպումին բացումը կատարեց եւ ներկաները ողջունեց քարոզչական յանձնախումբի անդամ քոյր Նորա Բարսեղեան: Օրուան զեկուցաբերն էր եղբ. Գեորգ Յակոբճեան: Ան ներկայացուց «Ընկերային ցանցերու աշխարհը եւ հոն տեղադրուելիք նիւթերու եւ նկարներու ընտրութիւնը» նիւթը:



Եղբ. Յակոբճեան նախ պարզեց ընկերային ցանցերու առնչուած վիճակագրական տուեալներ, որոնք իբրեւ գիտական հիմք ծառայեցին իր նիւթին յաջորդող հանգրուաններուն: Վիճակագրական տուեալներուն առնչութիւնը Հ.Մ.Ը.Մ.Ի քարոզչական աշխատանքներուն հետ վերլուծելէ ետք, եղբ. Յակոբճեան ճշդեց ընկերային ցանցերու գործածութեան ռազմավարական ուղղութիւնները՝ կեդրոնանալով յստակ նպատակներ որդեգրելու, զանոնք իրականացնելու յստակ ծրագիր մշակելու, մարդուժ տրամադրելու եւ թիրախային զանգուածներ նկատի ունենալու կարելորութեան վրայ: Ապա, ան շեշտեց Հ.Մ.Ը.Մ.Ի նպատակներուն, անդամներուն եւ համակիր զանգուածին ծառայող ընկերային ցանցերու ճիշդ հարթակներ ընտրելու, հայալեզու եւ բազմալեզու բովանդակութիւն եւ մարտավարութիւն զարգացնելու, ցանցերուն cyber անվտանգութիւնը ապահովելու, արխիւ պահելու, միութեան հանրաճանաչութեան եւ հեղինակութեան ամրապնդման գծով բծախնդիր մօտեցում ցուցաբերելու անհրաժեշտութիւնը:

Ռազմավարական ընդհանուր ուղղութիւններ ճշդելէ ետք, եղբ. Յակոբճեան օրինակներով եւ գործնական մատնանշումներով անդրադարձաւ ընկերային ցանցերու վրայ ազդեցիկ եւ գրաւիչ քարոզչութիւն եւ հաղորդակցութիւն կատարելու հանգրուաններուն, օրէնքներուն, բովանդակային ոլորտներուն, ձեւերուն, նրբութիւններուն եւ հմտութիւններուն: Աւարտին, ան պատասխանեց սեմինարի մասնակիցներու հարցումներուն:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ԱՌՑԱՆՑ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ



Շաբաթ, 20 Մայիս 2023-ի երեկոյեան ժամը 5-ին (Պէյրուսի ժամանացոյցով), Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններու ատենապետներու առցանց երկրորդ հանդիպումը, որ քննեց միութեան վերջին շրջանի գործունէութիւնը եւ յառաջիկայ հինգ ամիսներուն նախատեսուած աշխատանքները՝ թղթակցութեան առցանց դասընթացը, առցանց երկրորդ մարզախաղեր, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակում եւ Հ.Մ.Ը.Մ.Ի 13-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողով:


Հանդիպումին սկիզբը, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նանարեան ամփոփ զեկուցում մը ներկայացուց անցնող մէկ տարուան ընթացքին իրագործուած գլխաւոր ձեռնարկներուն մասին, որոնց վերջինը հանդիսացաւ երիտասարդական երկրորդ համագումարը, Նիկոսիոյ մէջ (28-29 Ապրիլ 2023): Ապա, ան կատարեց կազմակերպական շարք մը թելադրանքներ, որոնցմէ ետք Կեդրոնական Վարչութեան անդամներ, իւրաքանչիւրը իր պատասխանատուութեան մարզին համաձայն, ներկայացուց զեկուցում մը:



Չեկուցումներով հանդէս եկան եղբայրներ Ֆէտի-Խաժակ Գազանճեան (սկաւառական), Արմանտ Գիլիճեան (մարզական եւ «Հրաշք»), Օշին Փիրումեան (երիտասարդական), Վիզէն Աւագեան (քարոզչական եւ «Մարզիկ» պաշտօնաթերթ), Վահէ Թանաշեան (տեղեկատուական արհեստագիտութիւն եւ Database) եւ քոյր Թալին Օրտոդեան (նիւթական պարտաւորութիւններ):

Այս առիթով եւ Կեդրոնական Վարչութեան թելադրանքով, առանձին զեկոյցով մը հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախի Մեկուսի շրջանի ատենապետ եղբ. Դաւիթ Գրիգորեան: Ան խօսեցաւ 160 օրուան շրջափակման դժուարին պայմաններուն մէջ Արցախի Մեկուսի շրջանին կատարած աշխատանքներուն մասին: Ան ուրախութեամբ նշեց, որ Արցախի պետութիւնը ընդունած է Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախի Մեկուսի մասնաճիւղին կեդրոն մը յատկացնել Ստեփանակերտի մէջ, 73 քառ. մէթր գրասենեկային եւ 525 մէթր բակային տարածութեամբ: Եղբ. Գրիգորեան նաեւ յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախի Մեկուսի մասնաճիւղին աշխատանքները առայժմ կեդրոնացած են Աշոտ Դուլեանի անուան Ստեփանակերտի թիւ 2 դպրոցին մէջ, սակայն մօտ օրէն աշխատանքներ պիտի տարուին նաեւ Ստեփանակերտի թիւ 8 դպրոցին մէջ:

Առցանց հանդիպումի վերջին բաժինով, Կեդրոնական Վարչության
ստեղծապետ եղբ. Վաչե Նանարեան խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի 13-րդ
Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի նախապատրաստութիւններուն եւ այս
ուղղութեամբ շրջաններու ունեցած պարտաւորութիւններուն մասին:
Առցանց հանդիպումը վերջ գտաւ երեկոյեան ժամը 6.30-ին:




*Ծանօթ: Օրուայ հանդիպումին մաս կազմեց միութեանս Աստեղապետ
Եղբ.Մասիս Վահանեանը :*

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 12-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԵՏԵՐՈՒ ԱՌՑԱՆՑ Ա.
ՀԱՆԴԻՊՈՒՄԸ



Կիրակի, 4 Յունիս 2023-ի երեկոյեան ժամը 5-ին (Պէյրուի ժամանակացոյցով), համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումի խմբապետական կազմը առցանց հանդիպում մը ունեցաւ բանակումի մասնակից շրջաններու պատուիրակութիւններու պետերուն հետ: Հանդիպումին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նանարեան, Կեդրոնական Վարչութեան սկաւառականի ներկայացուցիչներ՝ եղբայրներ Ֆէտի Խաժակ Գազանճեան, Օշին Փիրումեան եւ քոյր Թալին Օրտողեան: Բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Պօղոս Մահպուպեան եւ փոխ խմբապետներ քոյր Շարլին Կէօզալեան եւ եղբայր Գեորգ Օհանեան հանդիպումի մասնակիցներուն ներկայացուցին բանակումին ընդհանուր յայտագիրը եւ գործելաձեւը: Պատուիրակութիւններու պետերը, իրենց կարգին, կատարեցին լուսաբանական հարցումներ, որոնց պատասխանեց խմբապետական կազմը:



Նահատակի Օր



Այս տարի եւս նման նախորդ տարիներուն . 4 մայիս 2023 Թ.ին Ծամլմել քաղաքին մէջ միութիւնս իր սկաուտական եւ վարչութեան ներկայացուցիչ Եդ. Յակոբ Գրաբարեանի պատուիրակութեամբ մաս կազմեցին , Ծամլմել քաղաքին մէջ տեղի ունեցած «2-րդ համաշխարհային պատերազմի » Նահատակի Օրուայ նուիրուած միջոցառման :



Ապրիլ 24

Երկուշաբթի 24 Ապրիլ 2023 Թ.ին ծաղկեպսակներ տեղադրելով միութեանս սկաուտները , մաս կազմեցին Ալմելո-ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ Հայոց ցեղասպանութեան 108 տարելիցի նուիրուած միջոցառման



Հ.Մ.Ը.Մ. Առնհեմի 4-րդ մարզահանդէս



Միութիւնս իր վարչական , Վարիչ , մարզիչ, սկաուտական եւ մարզական պատուիրակութեամբ մաս կազմեցին Կիրակի 18 յունիս 2023 Թ.ին Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ Մեկուսի Շրջանի օգտագործած «Առնհեմ քաղաքին De pass 44 » մարզադաշտին մէջ տեղի ունեցած Հ.Մ.Ը.Մ. Առնհեմի 4-րդ մարզահանդէսին:

Օրուայ մարզահանդէսին միութեանս մասնակցութիւնը ընդունուեցաւ բարձր գնահատանքով : յուսանկարներ .-



Boney Valley



Կազմակերպութեամբ միութեան սկաուտական խմբապետական կազմի , տեղի ունեցաւ Կիրակի 16 Ապրիլ 2023 Թ.ին Գայիկ/Արծուիկ –ներու դաշտապտոյտ դէպի Boney Valley խաղավայրը : Օրուայ մասնակցից սկաուտները հանելի ժամանակ անցուցին իրենց պատասխանատու Քոյր / եղբայրներուն հետ :



Հ.Մ.Ը.Մ. Այնթաօ-ի 15-րդ սկաուտական ընդհանուր բանակում



Հայաստանի առաջին Հանրապետութեան 1918 Թ.ին հռչակման 105 տարելիցին նուիրուած . հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ. Այնթաօ մեկուսի շրջանի վարչութեամբ եւ միութեանը խմբապետական կազմին կազմակերպութեամբ , 19-20 Մայիս 2023 Թ.ին Հ.Մ.Ը.Մ. Այնթաօ-ի դաշտին մէջ . տեղի ունեցաւ միութեանը 15-րդ սկաուտական ընդհանուր բանակումը: Լուսանկարներ





Հ.Հ.105-րդ տօնակատարութիւն

Կազմակերպութեամբ Հայ Տունի, Մայիս 28 . 2023 Թ.ին Հ.Մ.Ը.Մ. Ալմեյօ-ի Սկաուտները մասնակցեցան Հայաստանի Հանրապետութեան Հռչակման 105րդ տօնակատարութեան:



walibi Holland

2 Յուլիս 2023 Թ.ին , կազմակերպութեամբ միութեան սկաուտական խմբապետական կազմի տեղի ունեցաւ Արի/Արեւուշ եւ Սկաուտ/Արծուիկ – ներուն պտոյտ դէպի walibi Holland խաղավայրը:



Նախապատրաստական քանակում



Հ.Մ.Ը.Մ. Ալմեյո մեկուսի շրջանի սկաուտական պատուիրակությունը , Համա- Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ ընդհանուր քանակումի « որը տեղի պիտի ունենայ 21-30 Յուլիս 2023 թ.ին Բիւրական - Հայաստան ին մէջ ». կազմակերպեց 9, 10 եւ 11 Յունիս 2023 թ.ին Gilwell ada's hoeve քանակավայրին մէջ, նախապատրաստական քանակում:





Սրահի ոտնագնդակի մրցաշար

2022-23 Թ.ի Տարեշրջանի վերջին եռամսեայ KNVB ֆուլթգալի շրջանային մրցաշարերու արդիւնքները .-

Ա.Հ.Մ.Ը.Մ. 1 (Homentmen 1) Կը մրցակցի 2րդ բաժանում աստիճանի խումբերու հետ .

- Homenetmen 1 vs Zvo 9 - 6
- Homenetmen 1 vs Sparta 8 - 6
- Homenetmen 1 vs Heracles 5 - 1



Բ. Հ.Մ.Ը.Մ. 2 (Homentmen 2) Կը մրցակցի 4րդ բաժանում աստիճանի խումբերու հետ

- Homenetmen 2 vs Heracles 1 - 4
- Homenetmen 2 vs EBZ 85 3 - 1
- Homenetmen 2 vs Heracles 3 - 1
- Homenetmen 2 vs EBZ 3 - 2



Ոտնագնդակի մրցաշար

Կազմակերպութեամբ Կիլիկեայ միութեան .Ալմելօ քաղաքի բաց մարզադաշտի վրայ , ի մասնակցութեամբ 12 հայկական խմբակներով 21 Մայիս 2023 Թ.ին , տեղի ունեցաւ հայկական ընկերային ոտնագնդակի մրցաշար:

Օրուայ միջոցառման միութիւնս իր մասնակցութիւնը օրուայ մրցաշարին նոր անոր մարզիկներով:



Միության մարզական յանձնախումբը կազմակերպէջ եւս
նոր մարզական մրցաշարեր
ըստ ստորև ներկայացուած յայտարարութեան համաձայն



Georganiseerd door de sportcommissie van Homenetmen Almelo

SPORTDAGEN



VOLLEYBAL

JONGENS & MEISJES

30-03-2023



KINDERVOETBAL

**JONGENS & MEISJES
6 T/M 13 JAAR**

06-04-2023



BASKETBAL

JONGENS & MEISJES

13-04-2023



VOETBAL

MANNEN VANAF 30 JAAR

20-04-2023

**HOMENETMEN ALMELO (VREJ CHATALIAN ZAAL)
BURGEMEESTER SCHNEIDERSSELINGEL 21, 7602 RK**

19:30 UUR

MELD JE AAN VIA 0619000833 !

Միությունն մարզական յանձնախումբը կազմակերպէց եւս նոր մարզական մրցաշարեր ըստ ստորև ներկայացուած յայտարարութեան համաձայն



Հ.Մ.Ը.Մ. ԱԼՄԷԼՈ ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆ HOMENETMEN ALMELO



**SPONSOR ONZE VOETBALTEAMS
VOOR HET SEIZOEN 2023-2024**

VOOR MEER INFORMATIE: 06-84827466 / 06-19470345

DEADLINE: 15 JULI 2023

Միության մարզական յանձնախումբը կազմակերպէց եւս նոր մարզական մրցաշարեր ըստ ստորև ներկայացուած յայտարարութեան համաձայն



Georganiseerd door de sportcommissie van Homenetmen Almelo

SPORTDAGEN



VOLLEYBAL

JONGENS & MEISJES
01-06-2023



KINDERVOETBAL

JONGENS & MEISJES
6 T/M 13 JAAR
08-06-2023



BASKETBAL

JONGENS & MEISJES
15-06-2023



VOETBAL

MANNEN VANAF 30 JAAR
22-06-2023



BASKETBAL / VOLLEYBAL

VANAF 50 JAAR
29-06-2023

HOMENETMEN ALMELO (VREJ CHATALIAN ZAAL)
BURGEMEESTER SCHNEIDERSSELINGEL 21, 7602 RK

19:30 UUR

MELD JE AAN VIA 0619000833 !

Ս.Ջատկուայ տունի առթիւ Ընտանեկան պարահանդէսի լուսանկարներ





Together we build the future



It`s time! Donate and together we got through !

Dear compatriot , brothers and sisters,

The construction of our new association building is end!

In order to perpetuate it and to maintain the project, additional (unexpected) costs still had to be covered.

Once again we appeal to you and ask for your generous donations to successfully maintain our new building.

Donations can be made by bank transfer to the following account number:

EN 83 RABO 01 0335 3683 for the Homenetmen foundation o. v. "

Donation New Build Homenetmen "

For cash donations please contact +31-614286355

*Together we
build the future*





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- ⇒ Խմբագրական «Մարզիկ»ի թիվ 428 .Լայնահիտուֆինը.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ.ի Երիտասարդական Բ.համագումարի «սկիզբ».
- ⇒ Հ.Մ.Ը.Մ.ի Երիտասարդական Բ.համագումարը Կիպրոսի մէջ.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ.ի Երիտասարդական Բ.համագումարը աւարտեց յաջողութեամբ.
- ⇒ Լոյս տեսաւ Մարզիկ 42-րդ տարի , Թիւ 428.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ.ի քարոզչական քատրերու պատրաստութեան առջանց դասընթացները ընթացք առին
- ⇒ Հ.Մ.Ը.Մ.ի քարոզչական քատրերու պատրաստութեան սեմինարը աւարտուեցաւ.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ.ի առեմապետներու առջանց 2-րդ հանդիպում .
- ⇒ Հանա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումի առջանց Ա. Հանդիպումը.
- ⇒ Նահատակի օր
- ⇒ Ապրիլ 24.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ. Առնիեմի 4-րդ մարզահամաժէտ.
- ⇒ Boney Valley
- ⇒ Հ.Մ.Ը.Մ. Արմելո-ի 15-րդ սկսուտական ընդհանուր բանակում
- ⇒ Հ.Հ.105-րդ տօնակատարութիւն
- ⇒ walibi Holland
- ⇒ Նախապատրաստական բանակում
- ⇒ Մրահի ոտնագնդակի մրցաշար
- ⇒ Ոտնագնդակի մրցաշար
- ⇒ Մարզական մրցաշարեր
- ⇒ Ս.Չատիկ.
- ⇒ Together we build the future
- ⇒ Բովանդակութիւն .

Հասցէ : Burgemeester Schneiderssingel 21 , 7602 RK - Almelo
Կայք էջ . Website : homenetmenalmelo@yahoo.nl
: <https://stichtinghomenetmen.nl/>
Facebook : Homenetmen Almelo / ՀՄԸՄ Ալմելօ
Instagram : [homenetmenalmelo](#) 

Առաջարկներու համար կը խնդրուի կապ հաստատել (homenetmenalmelo@yahoo.nl) -